# Միշտ ժողովրդի հետ

Նա եւ տեսական գործիչ էր, եւ գիտության հմուտ կազմակերպիչ, եւ խոշոր գիտնական էր, եւ հայրենիքի ու հայության նվիրյալ:

Մարդ, որ իր գիտակցական կյանքը նվիրաբերեց իր հայրենիքի ծաղկմանն ու զարգացմանը: Նրա հյուսած կենսագրությունը մի փառավոր էջ է հայոց պատմության հոլովույթում: Ֆադեյ Սարգսյանը որտեղ էլ որ աշխատել է, ինչպիսի պաշտոն էլ որ զբաղեցրել է, միշտ խոր եւ անջնջելի հետք է թողել իր գործունեությամբ, իր աշխատանքով:

Ֆադեյ Տաճատիչի կյանքն ու գործունեությունը անխզելիորեն կապված են երկրորդ հանրապետության սարեգրությանը, Հայաստանի տեսական, հասարակական-քաղաքական կյանքին:

Իր մտքի սրությամբ, կշռադատված եզրահանգումներով, հասունացած հիմնահարցերի նկատմամբ վերլուծական մոտեցմամբ, համարձակ ու ստեղծարար որոշումներ ընդունելու, պահպանողականությունը մերժելու, նորին, առաջավորին աջակցելու իր կարողությամբ Ֆադեյ Տաճատիչն օրինակ էր բոլորի համար, բոլորիս համար...

Շուրջ 12 տարի Հայաստանի կառավարության նախագահի պաշտոնում նա անգնահատելի գործունեություն էր ծավալել տնտեսության բոլոր բնագավառների զարգացման գործում: Նրա ղեկավարությամբ վերելք ապրեցին այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են ռադիոէլեկտրոնիկան, ճշգրիտ մեքենաշինությունը եւ սարքաշինությունը: Նա իրեն հատուկ բարությամբ եւ հոգատարությամբ էր վերաբերվում երիտասարդ մասնագետների առաջխաղացմանը ու երիտասարդության դաստիարակության խնդիրներին՝ ընդհանրապես:

Եվ այդ ամենը ես տեսել եմ եւ զգացել, քանի որ բախտ եմ ունեցել աշխատել նրա հետ, սովորել նրանից...

Շնորհալի, կարող մարդն ամենուր է այդպիսին, եւ Սարգսյանը կարողացավ ստեղծել գեղեցիկ, անզուգական ընտանիք, որը օրինակ է մեր այս բարդ ու դժվար իրականության մեջ:

Մինչեւ կյանքի վերջը Ֆադեյ Սարգսյանը պատվով իրականացրեց հայրենասեր քաղաքացու, գիտության կազմակերպչի եւ տեսական գործչի իր առաքելությունը: Նա, չնայած առաջացած տարիքին, երիտասարդական եռանդով էր իր գիտելիքներն ու փորձն անմնացորդ ծառայեցնում մեր նոր տեսականության կայացմանն ու զարգացմանը: Ահա թե ինչու նրա մահը նման խոր ցավ է պատճառել....

Լինելով փայլուն ղեկավար, երբեք չցուցադրեց իր պաշտոնի ուժը, երբեք չմեծամտացավ: Նրա կատարած գործի մասին դեռ երկար-երկար կխոսեն եւ Հայաստանում, եւ սփյուռքում, եւ այլ երկրներում:

Ավարտվեց նրա երկրային կյանքը, սակայն ես համոզված եմ, որ նրա հոգին ծվարած է երկնային անդաստանում, այնտեղից լույս, ջերմություն ու բարություն է ճառագում իր ընտանիքի, ժողովրդի, իր ազգի եւ իր հայրենիքի վրա:

*Հրանուշ ՀԱԿՈԲՅԱՆ*